




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«10» փետրվար 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

 Մ. Անանյան

ԳԲԽ-06/17 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Օստ-Շին» ՍՊԸ-ի 26.01.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Օստ-Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Օստ-Շին» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 26.01.2017թ. բողոքով հայտնել է, որ «Օստ-Շին» ՍՊԸ-ի և «Շելդա» ՍՊԸ-ի կոնսորցիումը մասնակցելով ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ

ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով ընթացակարգին, ներկայացրել են ամենացածր գինը և ճանաչվել 1-ին տեղը զբաղեցրած մասնակից:

Պատվիրատուն համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ Ընկերության ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ, որին ի պատասխան ստացվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Պատվիրատուն մերժել է Ընկերության հայտը և հրապարակել պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Ընկերությունը բողոքով հայտնել է, որ «Օստ-Շին» ՍՊԸ-ն 29.11.2016թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ և որպես հավաստում բողոքին կից ներկայացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի տարածքային հարկային տեսչության կողմից 23.12.2016թ. տրված թիվ 2-9/3-2063 տեղեկանքը առ այն, որ Ընկերությունը 29.11.2016թ. չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ընկերությունը գտնում է, որ խախտվել են «Գնումներ մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 5-րդ, 30-րդ և 31-րդ հոդվածներով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ և 49-րդ հոդվածների պահանջներով՝ Ընկերությունը բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է՝

1. Կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել ՀՀ ՊՆ-ի և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները՝ ընդհուպ մինչև պայմանագիր կնքելու գործընթացը, որը Խորհրդի 02.02.2017թ. որոշմամբ բավարարվել է:

2. Դադարեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.01.2017թ. թիվ 4 որոշմամբ հաստատված պայմանագիր կնքելու մասին որոշումը՝ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով, ինչպես նաև դադարեցնել «Շելլա» ՍՊԸ-ի և «Օստ-Շին» ՍՊԸ-ի ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով հայտը մերժելու մասին որոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-06/17 բողոքը քննող հանձնաժողովի 02.02.2017թ. ժամը 17:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը, ինչպես նաև հայտնել է, որ իրենց կողմից էլեկտրոնային եղանակով Պատվիրատուին ներկայացվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի տարածքային հարկային տեսչության կողմից 23.12.2016թ. տրված թիվ 2-9/3-2063 տեղեկանքը, սակայն Պատվիրատուի կողմից կրկնակի հարցում չի կատարվել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ Ընկերության հարկային պարտավորությունների վերաբերյալ:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 09.02.2017թ. թիվ ԴՎԱ/273 գրությամբ ներկայացրել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ. հոդվածի 1-ին մասի 2-րդ. կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ՊԵԿ ՏՏ վարչության կողմից տրամադրված «Օստ-Շին» ՍՊԸ-ի ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ եզրակացությունը՝ «Օստ-Շին» ՍՊԸ-ի և «Շելդա» ՍՊԸ-ի կոնսորցիումով ներկայացված հայտը մերժվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-06/17 բողոքը քննող հանձնաժողովի 02.02.2017թ. ժամը 17:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ՝ մերժելով Ընկերության հայտը, քանի որ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ստացված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

3. «Էլիտ Պրոդ» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը հիմնավորումը և դիրքորոշումը:

«Էլիտ Պրոդ» ՍՊԸ (այսուհետ նաև՝ Կազմակերպություն), որպես ԳԲԽ-06/17 բողոքով երրորդ կողմ ներգրավված ընկերություն, 06.02.2017թ. գրությամբ հայտնել է, որ «Օստ-Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն ամբողջությամբ անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

Ըստ «Օստ-Շին» ՍՊԸ-ի՝ հարկային մարմինների կողմից ՀՀ ՊՆ-ի հարցման արդյունքում տրված եզրակացության մեջ առկա է սխալմունք և «Օստ-Շին» ՍՊԸ-ն 29.11.2016թ.՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով և ի հավաստումն այդ փաստի բողոքը քննող հանձնաժողովին ներկայացրել է ՀՀ ֆինանսների նախարարության Վանաձորի տարածքային հարկային տեսչության կողմից 23.11.2016թ. տրված տեղեկանքը:

Հուշագրավ է այն հանգամանքը, որ ՀՀ հարկային օրենսդրությունը թույլ է տալիս տարբեր հարկերի և պարտադիր այլ վճարների գծով նախորդող հաշվետու ժամանակաշրջանների (օրինակ՝ դեկտեմբերի 20-ին հնարավոր է ներկայացնել 2016թ. ինչպես հոկտեմբեր ամսվա, այնպես էլ 2015թ. կամ 2013թ. հուլիս ամսվա համար ճշտված հաշվարկներ և (կամ) հաշվետվություններ) համար, ներկայացնելով ճշտված հաշվարկներ և հաշվետվություններ, կատարել ճշտգրտումներ, մասնավորապես՝ պակասեցնել հարկերի և պարտադիր այլ վճարների գծով առկա պարտավորությունը:

Ընդ որում նշված ճշտված հաշվարկների և (կամ) հաշվետվությունների արժանահավատությունը հնարավոր է պարզել միայն հարկային մարմնի կողմից ստուգման արդյունքում:

«Էլիտ Պրոդ» ՍՊԸ-ն գտնում է, որ Ընկերության կողմից կատարված ճշգրտումն իրականացվել է միտումնավոր՝ գնահատող հանձնաժողովի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու նպատակով:

Նշված կասկածը փարատելու համար, «Էլիտ Պրոդ» ՍՊԸ-ն անհրաժեշտ է համարում, որպեսզի սույն գործի շրջանակներում հաստատվի այն հանգամանքը, թե

արդյոք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերությունը ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով իրականում չի ունեցել ժամկետանց պարտքեր և ՀՀ ֆինանսների նախարարության Վանաձորի տարածքային հարկային տեսչության կողմից 23.11.2016թ. տրված տեղեկանքում արտացոլված տեղեկատվությունը արդյոք կատարված ճշգրտումների հետևանք է և այդ ճշգրտումներն արդյոք արժանահավատ են, այսինքն՝ դրանում (ճշտված հաշվարկում) առկա տեղեկությունները բխում են արդյոք «Օստ-Շին» ՍՊԸ-ի իրական հաշվապահական հաշվառումից:

«Էլիտ Պրոդ» ՍՊԸ-ն գտնում է, որ նշված հանգամանքը չպարզելու դեպքում, հետագայում կստեղծվի այնպիսի իրավիճակ (նախադեպ), որ ցանկացած գնման ընթացակարգին հայտ ներկայացնող մասնակից, օգտվելով օրենքով տրված հնարավորություններից, կարող է այն չարաշահել և ուղղակի հաշվարկների և (կամ) հաշվետվությունների ճշգրտելու միջոցով այդ մասով ստանալ ցանկացած արդյունքը, որը հնարավորություն կընձեռնի վերջինիս ճանաչվել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից: Իսկ հետագայում հարկային մարմնի ստուգմամբ հնարավոր է պարզվի, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հարցման արդյունքում տրված տեղեկանքում առկա տեղեկություններն արժանահավատ էին և «Օստ-Շին» ՍՊԸ-ն իրականում ունեցել է ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ:

«Էլիտ Պրոդ» ՍՊԸ-ն նշել է, որ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով «Շելլա» ՍՊԸ-ի և «Օստ-Շին» ՍՊԸ-ի հայտի մերժումն իրավաչափ է նաև հետևյալ հիմնավորմամբ.

Այսպես Ընթացակարգի հրավերով մասնակիցը պետք է ունենա մասնագիտական փորձառություն:

Քանի որ ապրանքային շուկայի ոլորտում «Էլիտ Պրոդ» ՍՊԸ-ն գործում է 1996թ. ից և քաջատեղյակ է շուկայում գործող համանման գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների մասին, ինչպես նաև կազմակերպության կողմից իրականացված մարքեթինգային հետազոտության արդյունքում Կազմակերպությունը պարզել է, որ «Շելլա» և «Օստ-Շին» ՍՊ ընկերությունները չունեն միս, մսամթերք և

մսի սննդային ենթամթերքների մատակարարման՝ հրավերով պահանջվող գումարային արտահայտությամբ պատշաճ ձևով կատարված պայմանագիր (պայմանագրեր):

Այդ իսկ պատճառով Կազմակերպությունը անհրաժեշտ է գտնում, որ սույն գործի շրջանակներում հաստատվի Ընկերության մասնագիտական փորձառության ցուցանիշին չհամապատասխանելու հանգամանքը: Մասնագիտական փորձառության հիմնավորման համար «Շելդա» ՍՊԸ-ն և «Օստ-Շին» ՍՊԸ-ն պարտավոր էին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացնել համապատասխան փաստաթղթերը:

Նշվածը նշանակում է, որ Կազմակերպության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության մատակարար լինելու լեգիտիմ իրավունքը կարող է խախտվել և Կազմակերպությունը կարող է կրել վնասներ և չստանալ այն եկամուտները, որոնք վերջինս կստանար մատակարարման իրավահարաբերությունների շրջանակում (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետ):

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Խորհրդի կողմից օբյեկտիվ հետազոտման ապահովման կարևորությունը, «Էլիտ Պրոդ» ՍՊԸ-ն ԳԲԽ-06/17 բողոքը քննող հանձնաժողովին խնդրել է մերժել Ընկերության բողոքը և միաժամանակ միջնորդել՝

1. Որպեսզի ԳԲԽ-06/17 բողոքը քննող հանձնաժողովը դիմի ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին՝ պարզելու թե արդյոք Ընկերության կողմից ներկայացված հաշվարկները և (կամ) հաշվետվությունները՝ այդ թվում նաև ճշտված, արժանահավատ են և 29.11.2016թ. դրությամբ ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով իրականում ժամկետանց հարկային պարտավորություններ Ընկերությունը ունի թե ոչ:

2. Պահանջել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովից ներկայացնել «Շելդա» ՍՊԸ-ի և «Օստ-Շին» ՍՊԸ-ի մասնագիտական փորձառության չափանիշը հիմնավորող բոլոր փաստաթղթերի (պայմանագրի/երի և դրա պատշաճ կատարումը հավաստող բոլոր փաստաթղթերի) պատճենները, ինչպես նաև՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից այդ պայմանագրերի շրջանակներում «Շելդա» և «Օստ-Շին» ՍՊ Ընկերությունների կողմից դուրս գրված հարկային հաշիվների և (կամ) հաշիվ ապրանքագրերի պատճենները:

«Էլիտ Պրոդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները, ներկա գտնվելով լինելով ԳԲԽ-06/17 բողոքը քննող հանձնաժողովի 02.02.2017թ. ժամը 17:30-ի նիստին, պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ԳԲԽ-06/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-06/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով «Շելդա» ՍՊԸ-ի և «Օստ-Շին» ՍՊԸ-ի կոնսորցիումն **29.11.2016թ.** հայտ է ներկայացրել:

2. «Շելդա» ՍՊԸ-ի և «Օստ-Շին» ՍՊԸ-ի կոնսորցիումն հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իրենց տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել են, որ **հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունեն ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.11.2016թ. թիվ 3 արձանագրության 3.1 կետով կայացված որոշմամբ «Շելդա» ՍՊԸ-ի և «Օստ-Շին» ՍՊԸ-ի կոնսորցիումն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների

ճշտման մասին 21.12.2016թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Օստ-Շին» ՍՊԸ-ի վերաբերյալ:

5. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 21.12.2016թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի **«Օստ-Շին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ 173 049 ՀՀ դրամի չափով:**

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.12.2016թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ «Շելդա» ՍՊԸ-ի և «Օստ-Շին» ՍՊԸ-ի կոնսորցիումի հայտ մերժվել է:

7. «Օստ-Շին» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 26.01.2017թ. ներկայացված բողոքին կից ներկայացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի հարկային տեսչության կողմից 23.12.2016թ. տրված թիվ 2-9/3-2063 տեղեկանքը, համաձայն որի Ընկերությունը **29.11.2016թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:**

8. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 07.02.2017թ. թիվ 01/04.1/354-17 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին, խնդրելով հայտնել, թե «Օստ-Շին» ՍՊԸ-ն 29.11.2016թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է արդյոք ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, թե ոչ:

9. Կենտրոնի սույն եզրակացությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացնելու օրվա դրությամբ՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից չի ստացվել Կենտրոնի 07.02.2017թ. թիվ 01/04.1/354-17 գրությանն ի պատասխան ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի համապատասխան գրությունը:

5. ԳԲԽ-06/17 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Օստ-Շին» ՍՊԸ-ի 26.01.2017թ. բողոքը, ՀՀ պաշտպանության

նախարարության 09.02.2017թ. թիվ ԴՎԱ/273 գրությունը և կից փաստաթղթերը հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված

Ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

«Օստ-Շին» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով «Շելդա» և «Օստ-Շին» ՍՊԸ նկերությունների կոնսորցիումի կողմից 29.11.2016թ. ներկայացված հայտի թիվ 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ որ **հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին ուղղված Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 21.12.2016թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Օստ-Շին» ՍՊԸ-ի վերաբերյալ, որին ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Օստ-Շին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ՝ 173 049 ՀՀ դրամի չափով:

Հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 26.12.2016թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ «Շելդա» ՍՊԸ-ի և «Օստ-Շին» ՍՊԸ-ի կոնսորցիումի հայտ մերժել է:

«Օստ-Շին» ՍՊԸ-ն 26.01.2017թ. բողոքով հայտնել է, որ Ընթացակարգին հայտ ներկայացնելու օրվա՝ 29.11.2016թ. դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ և ի հավաստումն իր պնդմանը ներկայացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի տարածքային հարկային

տեսչության կողմից 23.12.2016թ. տրված թիվ 2-9/3-2063 տեղեկանքը, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Կենտրոնը 07.02.2017թ. թիվ 01/04.1/354-17 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին, խնդրելով հայտնել, թե «Օստ-Շին» ՍՊԸ-ն **29.11.2016թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)** ունեցել է արդյոք ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, թե ոչ:

Սակայն Կենտրոնի սույն եզրակացությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացնելու օրվա դրությամբ՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից չի ստացվել Կենտրոնի 07.02.2017թ. թիվ 01/04.1/354-17 գրությանն ի պատասխան ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի համապատասխան գրությունը:

Կենտրոնը արձանագրում է, որ Ընկերության կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացվել է Վանաձորի տարածքային հարկային տեսչության կողմից 23.12.2016թ. տրված թիվ 2-9/3-2063 տեղեկանքը, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Այսպիսով՝ ղեկավարվելով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, որի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի տարածքային հարկային տեսչության կողմից 23.12.2016թ. տրված թիվ 2-9/3-2063 տեղեկանքը, համաձայն որի Ընկերությունը 29.11.2016թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, Կենտրոնը գտնում է, որ Ընկերության բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը առաջարկում է «Օստ-Շին» ՍՊԸ-ի բողոքը բավարարել:

ա) դադարեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու մասին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը՝ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:


բ) դադարեցնել «Շելդա» ՍՊԸ-ի և «Օստ-Շին» ՍՊԸ-ի կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը՝ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:

Պետի տեղակալ՝



Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-06/17 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Ծատուրյան